Հավելված 2

## 1. Ֆիզիկական անձանց հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր

- Անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ*,
- Հանրային ծառայությունների համարանիշ  կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ ռեզիդենտների համար),
- Իրական շահառու(ներ)ի (առկայության դեպքում) անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի պատճենը ,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում–հայտ (օֆերտա),
- ՕՀՀՀԱ հարցաթերթիկ (առաջին անգամ Բանկ դիմելիս),

*Մինչև 18 տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել միայն իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ: Եթե հաշվետերը հանդիսանում է 14 տարին չլրացած անձ, ապա հաշվի բացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստորագրվում են նրա օրինական ներկայացուցչի կողմից: Մինչև 14 տարեկան անչափահաս անձանց համար պահանջվում է անձի ծննդյան վկայականը , նրա օրինական ներկայացուցիչներից մեկի անձը հաստատող փաստաթուղթը և վերջինիս համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը:

*Սնանկության հատուկ հաշիվ բացելու համար ի լրումն վերոնշյալ փաստաթղթերի ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ*

- Սնանկ ճանաչելու մասին դատարանի որոշում,
- Սնանկության կառավարիչ նշանակելու մասին դատարանի որոշում,
- Սնանկության կառավարիչի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկի համար ընդունելի են ՀՀ կառավարության որոշմամբ անձը հաստատող փաստաթուղթ համարվող փաստաթղթերը,
2. Լիազորված անձի առկայության դեպքում ներկայացվում է նաև լիազորված անձի անձը հաստատող պաստաթուղթը
3. Բանկը անհրաժեշտության դեպքում կարող է հաճախորդից  պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:
4. Ներկայացվում են բոլոր  նշված փաստաթղթերի բնօրինակները (եթե առկա չէ նշում պատճենը ներկայցնելու հնարավորության վերաբերյալ),  կամ փաստաթղթերի պատշաճ վավերացված պատճենները, եթե Բանկը չի կարող դրանք ստանալ պաշտոնական

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:

Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

հրապարակված կայքերից/բազաներից (Օրինակ՝ https://www.sso.am, https://www.e-register.am, www.datalex.am, www.azdarar.am, Նորք տեղեկատվական բազա և այլն ):

5. Բանկը կարող է պահանջել օտարալեզու փաստաթղթեր նոտարական վավերացմամբ թարգմանություն:
6. Բանկի հայեցողությամբ նշված փաստաթղթերը փաստաթուղթը (բացառությամբ՝ անձը հաստատող փաստաթղթի) կարող են չպահանջվել, եթե հաճախորդը նախկինում ներկայացրել է այն, և այն վավեր է հաշվի բացման պահին:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:

Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է